# Mastercard Business Preferred
# Առավելությունների նկարագրություն

# Mastercard® Lounge Key

### Կայքի հղում
https://www.loungekey.com/we-arm

### Ուղղություններ
Ամբողջ աշխարհ

### Հասանելիություն
Mastercard® Business Preferred ծածկույթ – անսահմանափակ և տարեկան 2 հյուրի հնարավորություն

## Նկարագրություն
Ներկայացնելով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի Ձեր Mastercard Business Preferred քարտը մասնակից սրահներում՝ Դուք ստանում եք.

- LoungeKey անվճար անդամակցություն
- Անվճար անսահմանափակ մուտք դեպի ավելի քան 1,200 Lounge Key բիզնես սրահներ ավելի քան 450 քաղաքներում աշխարհի ավելի քան 135 երկրներում
- Բիզնես ծառայությունների հասանելիություն՝ ինտերնետ, հեռախոս, և նույնիսկ կոնֆերանսի հարմարանքներ որոշ սրահներում
- Անվճար զովացուցիչ ըմպելիքներ և խորտիկներ

## Ի՞նչ է Lounge Key-ն
1,200 բիզնես սպասասրահներ աշխարհի ավելի քան 135 երկրների օդանավակայաններում:

## Ինչպե՞ս օգտվել
Ցույց տվեք ձեր Mastercard® քարտը մասնակից սրահներում կամ գեներացրեք QR կոդը LoungeKey հավելվածի միջոցով:

Այցելեք https://www.loungekey.com/we-arm լրացուցիչ տեղեկությունների համար:

LoungeKey-ն ունի հատուկ կայք և հավելված, որտեղ կարող եք գրանցվել, տեսնել օդանավակայանների ցանկը, ստուգել ծառայության հասանելիությունը, ինչպես նաև ձեռք բերել QR կոդ՝ բիզնես սրահ մուտք գործելու համար

## Կայք

**Քայլ 1**

Այցելեք LoungeKey կայք

**Քայլ 2**



Ստեղծեք ձեր LoungeKey հաշիվը՝ լրացնելով ձեր քարտի տվյալները

**Քայլ 3**

Մուտք գործեք ձեր հաշիվ ցանկացած ժամանակ, ցանկացած վայրից

**Քայլ 4**

Ստուգեք ձեր արտոնություններն օնլայն ռեժիմով

## Հավելված

**Քայլ 1**

Քարտապանին առաջարկվում է ներբեռնել Lounge key հավելվածը՝ ընդունելով Օգտագործման պայմանները և պահանջվող թույլտվությունը

**Քայլ 2**

LoungeKey հավելվածը կերևա էկրանին

**Քայլ 3**

Քարտապանը ուղղորդվում է մուտք գործելու հատված, որտեղ կարող է ստեղծել LoungeKey հաշիվ

**Քայլ 4**

Քարտապանն ուղղորդվում է դեպի հաշվի ստեղծման էջ, որտեղ մուտքագրում է վճարային քարտի տվյալները, ինչը երաշխավորում է Ձեր՝ ճիշտ առաջարկի համար գրանցումը

**Քայլ 5**

Քարտապանը լրացնում է իր վճարային քարտի տվյալները

**Քայլ 6**

Քարտապանը մուտքագրում է իր անձնական տվյալները, ընտրում է օգտատիրոջ անուն և գաղտնաբառ և սահմանում է իր հաղորդակցման նախապատվությունները

**Քայլ 7**

LoungeKey-ի նոր օգտատերը ավարտում է գրանցման գործընթացը և ուղղորդվում է մուտքի հատված՝ նախապես լրացված իր օգտանունով

*Նշումներ. 1) Ստուգումը (քայլ 5) կարող է պահանջել մեկանգամյա OTP (3DS վավերացում) 2) Հյուրերի այցելությունները հնարավոր են՝ վճարելով լաունջի մուտքի մոտ



### Կայքի հղում

https://travelexperiences.mastercard.com/

### Ուղղություններ

Ամբողջ աշխարհ

### Հասանելիություն

- Mastercard® Business Preferred ծածկույթ– անսահմանափակ

## Նկարագրություն

Fast Track ծառայությունը թույլ է տալիս քարտապաններին օդանավակայաններում խուսափել հերթերից և արտոնյալ մուտք ունենալ դեպի անվտանգության անցակետ:

Ծառայությունը հասանելի է 100 + օդանավակայաններում ամբողջ Եվրոպայում՝ այդ թվում Զվարթնոց օդանավակայանում:

## Ինչպե՞ս օգտվել

- Ներբեռնեք Mastercard Travel Experiences հավելվածը կամ օգտագործեք վեբկայքը՝ ձեր Fast Track Pass-ը ամրագրելու համար
- Պարզապես ընտրեք օդանավակայանը, ճանապարհորդների քանակը և նախընտրելի ժամը
- Ստացեք Ձեր Fast Track QR կոդը հավելվածում կամ էլ.փոստի միջոցով
- Մոտեցեք Ձեր տերմինալի Fast Track գոտի
- Մուտք գործելու համար ներկայացրեք Ձեր Fast Track QR կոդը

# Mastercard® Airport Security Fast Track-ը ապահովում է մուտք դեպի համաշխարհային օդանավակայանների ցանց՝ թվային հավելվածի միջոցով:

## Արագ և հեշտ ուղեցույց Fast Track-ի ակտիվացման համար

1. Mastercard Travel Experiences* հավելվածում կամ կայքէջում Fast Track QR կոդը ստանալու համար պարզապես ընտրեք օդանավակայանը, ճամփորդողների քանակը և նախընտրելի ժամը
2. Ստացեք Ձեր Fast Track QR կոդը հավելվածում կամ էլ.փոստի միջոցով
3. Մոտեցեք Ձեր տերմինալի Fast Track գոտի
4. Մուտք գործելու համար ներկայացրեք Ձեր Fast Track QR կոդը

*Mastercard Travel Experiences-ը հարթակ է, որն առաջարկում է Fast Track ծառայությունը, ռեստորանային առաջարկներ, տրանսֆեր ծառայություն և այլ պրոդուկտներ, որոնց կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://travelexperiences.mastercard.com/

# Արագ և հարմար ինտերֆեյս. Mastercard®

Airport Security Fast Track-ը նախատեսված է քարտապաններին ապահովելու ավելի արագ և հարմարավետ անցում դեպի անվտանգության անցակետ

Մուտքագրեք օդանավակայանի անունը «օդանավակայանի որոնում» դաշտում

Ստուգեք հասանելի ծառայությունները

Ամրագրեք ձեր Fast Track Pass-ը




Ցույց տվեք/սկանավորեք Ձեր Fast Track Pass-ը՝ առաջնահերթ/հատուկ գոտի մուտք գործելու համար

Հասանելի Fast Track
այցելությունների քանակը




Գրանցված Mastercard քարտի
մանրամասները




Մի քանի քարտերի գրանցման
հնարավորություն




Օգնության բաժին
և այլ կարգավորումներ



# Global Roaming (Flexiroam)

## Նկարագրություն

Flexiroam-ը միավորում է հեռահաղորդակցության տարբեր ընկերություններ ամբողջ աշխարհում, որպեսզի առաջարկի գերարագ ինտերնետ ավելի ցածր գնով:

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի Mastercard Business Preferred քարտապաններին հասանելի են լավագույն գործառույթները՝

- Մեկանգամյա կարգավորում Flexiroam հավելվածով
- eSim ֆունկցիան չի պահանջում ֆիզիկական SIM քարտ
- 15% զեղչ հետագա ռոումինգի փաթեթների համար

## Ուղղություններ

Flexiroam-ի գլոբալ կապն ընդգրկում է 208 երկիր ամբողջ աշխարհում (ավելի մանրամասն տեղեկության համար տես հավելվածը)

## Գործողության ժամկետ եվ ծածկույթ

- Տարեկան 1 GB անվճար ռոումինգ Mastercard Business Preferred քարտապանների համար (վավերականությունը 5 օր)
- 15% զեղչ այլ սակագնային փաթեթների համար

## Ինչպե՞ս օգտվել

- Ներբեռնեք Flexiroam հավելվածը
- Սեղմեք Mastercard նշանին՝ սակագնային փաթեթի իրավասությունը ստուգելու համար
- Մուտքագրեք Ձեր Mastercard-ի 16 նիշանոց համարը և Ձեր էլ. Փոստի հասցեն՝ հաշիվ ստեղծելու համար
- Սեղմեք «Redeem Starter Plan» և ակտիվացրեք էլեկտրոնային SIM քարտը
- Հեռախոսի կարգավորումներում ակտիվացրեք Flexiroam Data Roaming-ը
- Անցեք սակագնային փաթեթին
- Գնեք հավելյալ փաթեթ 15% զեղչով

**Flexiroam - Global Data Roaming**

# Flexiroam-ի սակագնային պլանները որոշ երկրներում

FlexiRoam համաշխարհային ցանցն ընդգրկում է 520 օպերատոր ավելի քան 208 երկրներում:

Կապի մեջ եղեք վայրէջքից անմիջապես հետո:

Ընտրեք հուսալի ինտերնետ Flexiroam-ից՝ ոչ վստահելի Wi-Fi-ի կամ սահմանափակ կապով ռոումինգի փոխարեն:

| **Երկիր** | 1 GB և 5 օր | **2GB** | **3GB** |
|---|---|---|---|
| Մեծ Բրիտանիա | Անվճար | 7,50 USD | 10,00 USD |
| Հունաստան | Անվճար | 9,00 USD | 12,00 USD |
| Իսպանիա | Անվճար | 6, 50 USD | 8,50 USD |
| Իտալիա | Անվճար | 8,00 USD | 10,00 USD |
| Գերմանիա | Անվճար | 6, 50 USD | 10,00 USD |
| Լեհաստան | Անվճար | 6, 50 USD | 7,00 USD |
| ԱՄՆ | Անվճար | 8,00 USD | 11,00 USD |
| Թուրքիա | Անվճար | 6, 50 USD | 8,00 USD |
| Ֆրանսիա | Անվճար | 7,50 USD | 10,00 USD |

# Գրանցում / Մուտք

Ներբեռնելուց հետո բացեք
FlexiRoam հավելվածը




Եթե դեռ չունեք հաշիվ,
սեղմեք «Գրանցվել» կոճակը




Ակտիվացրեք ձեր հաշիվը՝ հետևելով FlexiRoam-ի
կողմից ուղարկված էլ. նամակի հղմանը






# Առաջարկի ակտիվացում Mastercard քարտով

Ընտրեք Mastercard քարտապանների համար նախատեսված առաջարկը




Մուտքագրեք ձեր Mastercard քարտի տվյալները՝ ծրագրին մասնակցության հաստատման համար




Այստեղ կտեսնեք Mastercard-ի հատուկ առաջարկի ստացման մասին տեղեկատվություն

# eSIM-ի կարգավորում/ակտիվացում

Անցեք «Հաշիվ» բաժին և ընտրեք «Իմ SIM» ենթաբաժինը




«Իմ SIM» հատվածում ընտրեք Global eSIM և սեղմեք «Ներբեռնել» կոճակը



# eSIM-ի կարգավորում/ակտիվացում

eSIM-ի ակտիվացումն ավարտելու համար հետևեք սմարթֆոնի հրահանգներին

Հետևելով սմարթֆոնի հրահանգներին՝ հաստատեք նոր eSIM-ի ակտիվացումը՝ սեղմելով «Թույլատրել» կոճակը



Կարգավորման ընթացքում կամ դրանից հետո, eSIM-ի ավելի հեշտ կիրառման համար՝ կարող եք ընտրել անվանում eSIM-ի համար, օրինակ՝ FlexiRoam

# Flexiroam eSIM-ի կարգավորման ավարտ

Համոզվեք, որ Flexiroam eSIM-ն ակտիվ է
և ընտրված է որպես հիմնական կապ՝
Ձեր սմարթֆոնի կարգավորումներում






# Սակագնային պլանի ակտիվացում

Մուտք գործեք «Հաշիվ» բաժին և ընտրեք
«Իմ սակագնային պլանը» ենթաբաժինը




Սեղմեք ընտրված տվյալների
սակագնային պլանի վրա




Անմիջապես ակտիվացրեք ձեր սակագնային
պլանը կամ ընտրեք ակտիվացման հարմար
ամսաթիվ



# Սակագնային պլանի ընտրություն

«Որոնում» տողի օգնությամբ գտեք Ձեզ անհրաժեշտ սակագնային պլանը՝ Ձեր հաջորդ ճամփորդությունների համար







Երբ ընտրեք FlexiRoam սակագնային պլանը, անհրաժեշտ է կատարել վճարում



# FlexiRoam-ի աջակցության բաժին

Եթե ցանկանում եք կապ հաստատել աջակցության բաժնի հետ, անցեք

«Աջակցության կենտրոն» բաժին կամ սեղմեք նշանը




Ընտրեք համապատասխան կապի միջոցը



# Ճամփորդողների առողջության ապահովագրություն

## Ուղղություններ

Ամբողջ աշխարհ

## Առանձնահատկություններ

Լայն ծածկույթով առողջության ապահովագրություն, որից կարող են օգտվել նաև Ձեր ընտանիքի անդամները. ամուսինը՝ 100% -ով, ծնողը՝ 25%-ով, երեխաները՝ 25%-ով, Ձեր տնային օգնականը՝ 25%-ով (առավելագույնը 10,000 ԱՄՆ դոլար):

## Նկարագրություն

Ճամփորդական պատահարների և առողջության ապահովագրություն

Որպես «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի Mastercard® Business Preferred քարտապան՝ Դուք, ինչպես նաև Ձեր ընտանիքը և Ձեր օգնականը ստանում եք.

## Բժշկական հատուցումներ ճանապարհորդության ընթացքում

- Բժշկական ծախսեր (վնասվածք կամ հիվանդություն) - Մինչև 500,000 ԱՄՆ դոլար
- Շտապ բժշկական տեղափոխում/աճյունների վերադարձ - Մինչև 500,000 ԱՄՆ դոլար
- Ամենօրյա ներհիվանդանոցային ծախսերի հատուցում՝ կանխիկ - Օրական 100 ԱՄՆ դոլար

## Ինչպե՞ս օգտվել

Խնդրում ենք նամակ ուղարկել mea.mastercard@aig.com էլ. փոստի հասցեին՝ ուղեբեռի կորստի, թռիչքների հետաձգման, չեղարկման և այլ դեպքերի համար:

24-ժամյա օգնության և բժշկական շտապ դեպքերի համար կոնտակտային կենտրոն՝ +441273765321:

Եթե Դուք չեք խոսում անգլերեն լեզվով, կարող եք զանգահարել +37410700800 հեռախոսահամարով. օպերատորը Ձեզ կմիացնի օգնության ծառայություն տրամադրող համարին և կցուցաբերի թարգմանչական օգնություն :

# Ճամփորդական անհարմարությունների ապահովագրություն

## Ուղղություններ

Ամբողջ աշխարհ

## Կոնտակտայի տվյալներ

Ձևակերպում՝ mastercardclaims@aig.com

## Նկարագրություն

### Պաշտպանություն Անհարմարություններից Ուղևորության Ընթացքում

- Ուղևորության չեղարկում՝ մինչև 7,500 ԱՄՆ դոլար
- Ուղևորության տևողության կրճատում/ուղևորության ընդհատում՝ մինչև 7,500 ԱՄՆ դոլար
- Ուղևորության հետաձգում՝ 4 ժամից ավել ուշացումների դեպքում՝ 500 ԱՄՆ դոլար
- Ուշացում ուղևորությունից՝ 500 ԱՄՆ դոլար

**Ուղեբեռի ապահովագրում**

- Ընդհանուր փոխադրող / հասարակական տրանսպորտում կորցրած ուղեբեռ - Մինչև 3,000 ԱՄՆ դոլար՝ մեկ ապրանքի համար առավելագույնը 625 ԱՄՆ դոլար սահմանաչափով
- Ընդհանուր փոխադրողի կողմից ուղեբեռի ուշացում - 4 ժամից ավել ուշացումների դեպքում՝ 500 ԱՄՆ դոլար

## Ինչպե՞ս օգտվել

Խնդրում ենք, էլ. նամակ ուղարկել mea.mastercard@aig.com –ին՝ ուղեբեռի կորստի, թռիչքների հետաձգման, չեղարկման և այլ դեպքերի համար:

24 ժամյա օգնության և բժշկական շտապ դեպքերի համար կոնտակտային կենտրոն՝ +441273765321:

Եթե դուք չեք խոսում անգլերեն լեզվով, կարող եք զանգահարել այս հեռ. համարով՝ +37410700800: Օպերատորը ձեզ կմիացնի օգնության ծառայություն տրամադրող համարին և թարգմանչական օգնություն կցուցաբերի:

# Mastercard Concierge Service

Ճամփորդության պլանավորման կամ ամենօրյա բազմաթիվ պահանջների և գործերի համար Կոնսիերժ ծառայությունը կլինի Ձեր օգնականը:

Պրոֆեսիոնալ օգնականների թիմը կօգնի Ձեզ պլանավորել կատարյալ հանգիստ (գտնել և ամրագրել հյուրանոց, տոմսեր, ժամանց), գտնել և առաքել ցանկացած ապրանք ամբողջ աշխարհում, ամրագրել սեղան ռեստորաններում, տոմսեր տարբեր ժամանցի վայրերում և շատ ավելին:

## Ուղիղ կապ կոնսիերժ ծառայության հետ 24/7

Կոնսիերժ ծառայությունը հասանելի է բոլոր հայտնի մեսենջերների միջոցով (Viber, Telegram, WhatsApp), ինչպես նաև հեռախոսով և էլեկտրոնային փոստով:

## Ինչպե՞ս Օգտվել

- Անցե՛ք հետևյալ հղումով հեռախոսի միջոցով՝ https://arm.concierge-support.com/
- Ընտրե՛ք Ձեր նախընտրած մեսենջերը
- Մուտքագրե՛ք հեռախոսահամարը և քարտի համարի առաջին 6 նիշերը (գրանցման ժամանակ միայն մեկ անգամ)

## Հարցումների լայն շրջանակ՝

- Տոմսերի, հյուրանոցների/բնակարանների ընտրություն
- Սննդի առաքում / առաքման այլ տեսակներ ամբողջ աշխարհում
- Ապրանքների և ծառայությունների որոնում, ամրագրում
- Ցանկացած այլ կազմակերպչական և տեղեկատվական հարցումներ
- Mastercard ծառայություններ



IDBank

Մեր համագործակցությունն **անգին է**